*ղագս $^{ւա}$Տի[ն]գին[1] քաղաքի,* [13ա] *որ ի նեղցին Հերակլե[ա]ն[2] ծովամիջոցին, որ է Սեպտ[3]՝ յելից Գադիրոն կղզ[ւ]ոյ[4], ուստի ելանէ Յունաց ծովն յՈվկիանոսէ՝ քսան եւ վեց[5] մասին $^{յ}$երկայնութեան[6] եւ երեսուն եւ վեց[7]՝ լայնութեան:* 3 *Ունի լերինս հինգ[8]՝ զՓոքր Ատ[լ]աս[9] նշանաւորն, եւ զայլս, եւ զհասարակն՝ Դուռդոն լերին, եւ գետս երկոտասան[10], զորս յՈվկիանոս արձակէ, եւ այլ եւս չորս[11], զորս՝ ի Յունաց ծովն:* 4 *Եւ ունի ազգս վեշտասան[12], եւ զՊիռոնպեդոն, որ է Հրագոյն դաշտ:*

5 [13]**Բ.** *Բնաշխարհ Երկրորդ Մաւրիտանիա[14], որ կոչի Կէսարինսա[յ][15]՝ յելից կալով Տինգ[իտ]անիո[յ][16], եւ տարածի ի հարաւ կոյս:* 6 *Ունի գետս եւթնեւտասն[17], եւ լիճս երեք[18], լերինս եւթն[19]:* 7 *Եւ ունի գաւառս ազգաց քսան եւ եւթն[20], եւ պ$^{ը}$ղ$^{ը}$նձափորանոցս:* 8 *Ասեն, թէ կա[յ] ի լերինս այս որք ընտիր[21] կինաբառիս հանեն, այսինքն՝ դեղ կարմիր:*

9 [22]**Գ.** *Բնաշխարհ Ափրիկէ, յելից կալով Մաւրիտաuնեա[յ][23] Կէսարինսո[յ][24]:* 10 *Ունի լերինս ութ[25], գետս իննեւտասն[26], լիճս ութ[27], գաւառս քառասուն եւ մի[28]. ծովք՝ հինգ[29], յորոց երկու[30] կոչին Սիռտու:* 11 *Կա[յ] բանճար ինչ՝ լաւտաս անուն, զոր թէ ոք ուտէ, զհայր[են]իսն[31] մոռանա[յ], ասէ Հոմերոս:* 12 *Ունի եւ այլ եւս կղզ*[13բ]*իս իննսուն[32], յորոց է Մէլէտի, $^{յ}$ուստի[33], աւէ Եզեկիէլ՝ ասր բերել ի Տիւրոս, այսինքն՝ ծովու բուրդ, որ է պիսինոն:* 13 *Լինի սաթ, բոյս փափուկ, որ ի ծովէ ելեալ՝ յարեւ քարանա[յ], եւ լինի անդ կարմիր յակունթ:* 14 *Եւ մայրաքաղաք՝ Կարքեդոն. եւ $^{զ}$Տրոպոլիք[34], որ է Երեք[35] քաղաք՝ Գիովբի, Կալանիա, Եւսի, Թէպէտ եւ երեք այլ շինեցին՝ Տիսոբա, Իդիսիա, Պոնդիկա, որոց իշխանացաւ իմաստունն Ներսէհ Կամսարականն[36]՝ պատրիկն Շիրակա[յ] եւ Աշորո[ւ]նեաց[37] տէրն:*

15 **Դ.** *Կիւռենականն[38], որ կոչի Պե[ն]տապալիք[39]՝ յելից Ափրիկո[յ], ուր կան Երէկորնա-*

---

1 *V* ւատիգին *[ւ-ը՝ տողից ցածր], S* Տիգին *փխ* $^{ւա}$Տի[ն]գին *(վեր.՝ ըստ նախորդների՝ Բ.10, 11)*

2 *V* Հերակլէն *փխ* Հերակլեան *(վեր. Սուքրեանի)*

3 *Գուցէ, վերականգնելի է* Սեփտէ *փխն.* Սեպտ *(VS)՝ ըստ նախորդի՝ Բ.10* («Սեփտէ, որ է Եւթնեկ»)

4 *V* կղզոյ *փխ* կղզւոյ *(վեր. Սուքրեանի՝ ըստ այլոց, տե՛ս նախ. Բ.30, Գ.54, Ե.324)*

5 *V* ի̅զ̅

6 *VS* յերկայնութեան *փխ* $^{յ}$երկայնութեան *(վեր.)*

7 *V* լ̅զ̅

8 *V* ե̅

9 *V* Ատաս *փխ* Ատլաս *(վեր. Սուքրեանի. հմմտ. վերեւում, նախ. Բ.10)*

10 *V* բ̅ժ̅

11 *V* դ̅

12 *V* ժ̅զ̅

13 *Ըստ Երեմեանի՝ վերականգնելի է ենթավերնագիր.* «Յաղագս Մաւրիտանիոյ Երկրորդի»

14 *V* Մաւրիտոնիա *փխ* Մաւրիտանիա *(վեր. Սուքրեանի՝ ըստ յաջորդի, տե՛ս նախ. Դ.9)*

15 *S* Կեսարինա. սա *փխ* Կէսարինսա[յ] *(V. հմմտ. ստորեւ, նախ. Դ.9)*

16 *VS* Տինգանիո[յ] *փխ* Տինգ[իտ]անիո[յ] *(վեր. Երեմեանի՝ ըստ Պտղոմէոսի. հմմտ. նախ. Դ.2*

17 *V* ժ̅է̅, *S* եօթնեւտասն *փխ* եւթնեւտասն *(վեր.՝ ըստ նախորդների, տե՛ս նախ. Ա.8, Բ.10, 16, 18)*

18 *V* գ̅

19 *V* է̅, *S* եօթն *փխ* եւթն *(վեր.՝ ըստ նախորդների, տե՛ս նախ. Ա.8, Բ.10, 16, 18)*

20 *V* ի̅է̅

21 *VS* ընդիր *փխ* ընտիր *(վեր., հմմտ. նախ. Բ.35)*

22 *Ըստ Երեմեանի՝ այստեղ վերականգնելի է ենթավերնագիր.* «Յաղագս Ափրիկէի»

23 *VS* Մաւռիտանեա[յ] *փխ* Մաւրիտանեա[յ] *(վեր.՝ ըստ նախորդների, տե՛ս նախ. Դ.2, 5)*

24 *S* Կեսարինայ *փխ* Կէսարինսո[յ] *(V. հմմտ. Դ.5)*

25 *V* ը̅

26 *V* ժ̅թ̅

27 *V* ը̅

28 *V* խ̅ա̅

29 *V* ե̅

30 *V* բ̅

31 *V* զհայրիսն *փխ* զհայրենիսն *(վեր. Սուքրեանի)*

32 *V* ղ̅, *S* վեց *փխ* իննսուն *(վեր.)*

33 *V* յուստի *փխ* ուստի *(վեր. Սուքրեանի)*

34 *V* զՏրոպոլիք *փխ* Տրոպոլիք *(վեր. Սուքրեանի)*

35 *V* գ̅

36 *S* Ներսեհ Կամսարական *փխ* Ներսէհ Կամսարականն *(V)*

37 *V* Աշորոնեաց *փխ* Աշորունեաց *(վեր. Սուքրեանի. գուցէ, վերակ-նելի է հէնց՝* Ա[ր]շարո[ւ]նեաց*)*

38 *S* Կիւռենական *փխ* Կիւռենականն *(V. Երեմեանը սկզբում վեր.-նում է՝* «Յաղագս Կիւռենականի»*)*

39 *V* Պետապալիք *փխ* Պենտապալիք *(վեր. Սուք.)*